



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ**

No 958-Ա/Ք

13.11.2015թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N 38-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով «Իրավական ակտերի» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով և 2015թ. հունիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 96-Ն օրենքով.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

1. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015թ. հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու համար վերապատրաստման և հավաստագրման քննությունների հարցաշարը հաստատելու մասին» N 38-Ա/Ք հրամանով հաստատված հավելվածի.

1) «Կրթության ոլորտի թեստային առաջադրանքների» բաժնից հանել Հարց 141-ը և Հարց 173-ը:

2) «ՀՀ աշխատանքային օրենսգրքի թեստային առաջադրանքների» բաժնում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Հարց 20-ի պատասխանը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գրավոր ձևով՝ երկու օրինակից՝ կողմերի, իսկ մինչև տասնչորս տարեկան աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի դեպքում՝ ծնողներից

մեկի կամ որդեգրողի կամ խնամակալի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որի մեկ օրինակը գործատուն հանձնում է աշխատողին, իսկ մինչև տասնչորս տարեկան անձի մասնակցությամբ աշխատանքային հարաբերությունների ծագման դեպքում՝ ծնողներից մեկին կամ որդեգրողին կամ խնամակալին»:

բ) Հարց 35-ի պատասխանը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Աշխատանքից ազատելու հիմքը և պատճառը, իսկ աշխատողին այլ աշխատանք առաջարկելու դեպքում՝ նաև պաշտոնի անվանումը, աշխատավարձի չափը կամ այլ աշխատանք առաջարկելու հնարավորության բացակայության մասին»:

գ) Հարց 38-ը և պատասխանը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու դեպքում ե՞րբ է գործատուն դադարեցնում աշխատանքային պայմանագիրը**

Ոչ ուշ, քան համապատասխան ծանուցագրում նշված ժամկետից երեք օր առաջ»:

դ) Հարց 39-ի պատասխանը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գործատուն վերջնահաշվարկի օրը պարտավոր է աշխատողին վճարել աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներ, իսկ եթե այդ պարտավորությունը գործատուից անկախ պատճառներով հնարավոր չէ կատարել, ապա աշխատողի աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները կատարվում են աշխատողի կողմից նման պահանջ ներկայացնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում»:


ե) Հարց 53-ի պատասխանը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Որպես կանոն, տրամադրվում է տվյալ կազմակերպությունում անընդհատ աշխատանքի վեց ամիսը լրանալուց հետո, բացառությամբ համատեղությամբ աշխատողների»:

զ) Հանել Հարց 67-ը:

է) Հարց 70-ի պատասխանը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Եթե աշխատողը նույն գործատուի կամ օրենքով սահմանված կարգով իրավահաջորդ ճանաչված գործատուի մոտ փոխադրվում (տեղափոխվում) է այլ աշխատանքի»:

  
Nov 13 2015 12:52 PM

/ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ